երեխաներիս հետ հասայ Բաղու-Թիֆլիզեան երկաթուղու կայարաններից մէկը, իսկ այնտեղից էլ Թիֆլիզ։ Ապա թէ ոչ՝ Սիբիրից փախած թուրք աւազակապետը պիտի կալանաւորէր ինձ և ամենածանր փրկանք պիտի պահանջէր իմ հարազատներից։

Տեսնելով և ի մօտոյ ծանօթ լինելով մահմեդականացած Հայերի այս աստիճան մոլեռանդութիւնն ու դաժանութիւնը, ես մի՞շտ ասել եմ և էլի կասեմ, որ հրեշտակային ընաւորութիւն ունեցող և տոհմային ցեղական ընտիր յատկութիւններով օժտուած քրիստոնեայ մի որևէ ազգի զաւակ՝ լինի նա Հայ, Յոյն, Ասորի, կամ Նոյն իսկ քաղաքակրթուած գերմանացու կամ ֆրանսիացու զաւակ, երբոր իւր հայրենի կրօնը փոխելով՝ ուրիշ կրօն է ընդունում, նա դառնում է կատարեալ մի գազան՝ իւր նախկին ցեղակիցներին ՀԱՍԱՍԵԼՈՒ և իսպառ ՉՆՋԵԼՈՒ գործում։ Կարծէք թէ այսպիսի կրօնափոխների համար է ձևած ու յարմարեցրած թրքական յայտնի առածն, որ ասում է. «Շարաբատան-չախրդան դէօնան սիրքէ, չո՞խ քեասքին օլար»։—Այսինքն՝ գիտնուց դարձած քացախը, շատ կտրուկ կլինի։ Ուտիացոց աշխարհի երկրագործ և աշխատասէր ժողովրդին՝ այս անիրաւ և անխիղճ բէկերի անվերջ հալածանքներից ու հարստահարութիւններից փրկելու միակ միջոցն է ուսում և կրթութիւն տալ նրանց երեխաներին. իսկ երկրագործ Հայ և թուրք ժողովուրդների սրբազան պարտքն է միասիրտ և միահոգի կռիւ մղել անիրաւ բէկերի և